ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱՐԳԻՇՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

359 թ. սկսված պարսկա-հռոմեական պատերազմն ավարտվեց 363 թ. «Ամոթալի դաշնագրով»[1]: Այս պայմանագրով կայսրության երեկվա դաշնակից Հայաստանը մեն-մենակ էր մնում պարսից գերակշիռ ուժերի դեմ հանդիման, քանի որ պայմանագրի կետերից մեկով Արևելահռոմեական կայսրությունը (395 թ. հետո կոչվեց Բյուզանդիա) պարտավորվել էր պարսիկների և հայերի հնարավոր բախման դեպքում չօգնել վերջիններիս[2]: 364 թ. սկսված հայ-պարսկական պատերազմի հետևանքով ոչ միայն ավերվեց ու կարճ ժամանակով ռազմակալման ենթարկվեց Մեծ Հայքը, այլև գահից զրկվեց Հայոց թագավոր Արշակ Բ-ն (345/6-368 թթ.)[3]:

Քանի դեռ պարսից գերությունից խուսափած Փառանձեմ թագուհին փորձում էր դիմադրել պարսից հսկայական ուժերին, աղվանները, օգտվելով Մեծ Հայքում տիրող քաղաքական խառն իրադրությունից, փորձում են ընդարձակել իրենց երկրի սահմաններն ի հաշիվ Մեծ Հայքի թագավորության: Աղվանից Ուռնայր թագավորը, որը, ինչպես կտեսնենք, առաջիկա հայ-պարսկական պատերազմում Շապուհ Բ-ի (309-379 թթ.) ամենաակտիվ դաշնակիցն էր, փորձեց հափշտակել հարևան Մեծ Հայքի մի շարք շրջաններ: Փավստոս Բուզանդն այդ առումով նշում է. «Եւ թափէր նոցանէ բազում գաւառս, զոր հատեալ էր նոցա ի նոցանէն. զՈւտի, զՇակաշէն և զձորն Գարդմանայ, զԿողթ և այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք»[4]: Ռազմական այս ներխուժման հետևանքով Աղվանքի սահմանը պատմության մեջ առաջին անգամ անցավ Կուր գետը և հաստատվեց նրա աջափնյա որոշ շրջաններում, որը, ինչպես կտեսնենք ստորև, ժամանակավոր էր[5]: Ուտիքի և Արցախի իշխանները՝

---

[1] Տե՛ս **Аммиан Марцеллин**, История (այսուհետև՝ Марцеллин), вып. I-III. Киев, 1906-1908, VII, 9-12, «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. 1, Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը, Եր., 1981, էջ 480-481:

[2] Տե՛ս նույն տեղը:

[3] Արշակի գահ բարձրանալու թվականը որոշ ուսումնասիրողներ համարում են 350 թ., որի դեպքում խախտվում են հաջորդ գահակալի՝ Պապի կառավարման տարիները, քանի որ նա ծնվել էր Արշակ Երկրորդի կնոջից՝ Փառանձեմից (տե՛ս Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի (այսուհետև՝ **Փավստոս Բուզանդ**), Եր., 1987, էջ 240), իսկ թագավորը Փառանձեմի հետ ամուսնացել էր իր եղբորորդի Գնելի սպանությունից և թագուհի Օլիմպիայի մահվանից հետո:

[4] **Փավստոս Բուզանդ**, էջ 322:

[5] Տե՛ս **Ա. Վարդանյան**, Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն, Եր., 2013, էջ 62-63:

Գուգարաց բդեշխի գլխավորությամբ, ունենալով բավարար թվով ռազմական ուժ, պարտավոր էին ոչ միայն կանգնեցնել, այլև ջախջախել աղվանների զորաբանակը, քանի որ մինչ արքունական բանակի օգնության հասնելը նրանք պետք է պաշտպանեին հայոց հյուսիսարևելյան սահմանները: Չէ՞ որ, ըստ Գահնամակի և Զորանամակի քննության, Գուգարաց բդեշխի ենթակայության տակ գտնվող զորաբաժինը հասնում էր 4500 զինվորի[6], իսկ հյուսիսային շրջանի ընդհանուր զորքերի թիվը 18 հազար էր[7]: Նրանք էլ, օգտվելով կենտրոնական իշխանության թուլությունից և առժամանակ չգոյությունից, ոչ միայն չպաշտպանեցին հայոց եզերական շրջանները, այլև իրենք ապստամբեցին թագավորական իշխանության դեմ: Հետագայում նորընծա թագավոր Պապ Արշակունու (369-374 թթ.) հրամանով կենտրոնախույս նախարարները խիստ պատժվեցին[8]:

Մինչ Հայաստանի կենտրոնական շրջաններում հայկական զինուժի մի մասը՝ Փառանձեմ թագուհու գլխավորությամբ, ցաքուցրիվ դիմադրություն էր ցույց տալիս՝ փակված Արտագերս ամրոցում, պարսկամետ կողմնորոշում ունեցողները՝ Մերուժան Արծրունու հրամանատարությամբ, օգտվելով «Ամոթալի դաշինքի» ընձեռած հնարավորություններից և թագավորի բացակայությունից, փորձում էին հայ-պարսկական ուժերով վերջնականապես գրավել Հայաստանը և կտրել հռոմեական ազդեցությունից: Վերջիվերջո պարսիկներին հաջողվում է 369 թ. գրավել Արտագերս ամրոցը, իսկ թագուհուն մահապատժի ենթարկել[9]:

Իսկ Արշակունյաց արքայատոհմին հավատարիմ ուժերը փորձում էին գահ բարձրացնել Արշակի և Փառանձեմի երիտասարդ որդուն՝ Պապին, որը գտնվում էր Նեոկեսարիա քաղաքում՝ պատվավոր պատանդի կարգավիճակով: 368-369 թթ.[10] Փառանձեմ թագուհու կողմից հայոց սպարապետ նշանակված Վասակ Մամիկոնյանի որդի Մուշեղի գլխավորությամբ պատվիրակություն է մեկնում Բյուզանդիա՝ կայսեր հետ բանակցելու[11]: Սա Մուշեղ Մամիկոնյանի մասին առաջին տեղե-

---

[6] Տե՛ս **Адонц Н.** Армения в эпоху Юстиниана. Ер., 1971, էջ 251:

[7] Տե՛ս նույն տեղը, էջ 251-252: Ըստ Ալ. Հակոբյանի՝ Գուգարաց բդեշխի անմիջական ենթակայության տակ էր գտնվում 4500 մարտիկ (տե՛ս **Ա. Յակոբեան**, «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց հայոց» եւ «Զաւրանամակ», «Բազմավէպ», Վենետիկ, 2011, թիւ 3-4, էջ 543):

[8] Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 320, 322:

[9] Տե՛ս **Марцеллии**, XII, 5-8:

[10] Հրանտ Արմենն ակնհայտորեն շփոթում է՝ Մուշեղի սպարապետության առաջին տարի համարելով 364 կամ 365 թվականը (տե՛ս **Հրանտ Ք. Արմէն**, Պատմական քննարկումներ, Պեյրութ, 1968, էջ 153): Փաստ է, որ մինչև Արշակ Բ-ի Տիզբոն ուղևորվելը 367-368 թթ. սպարապետ է եղել Վասակ Մամիկոնյանը:

[11] Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 284: Հմմտ. **Ե. Մուրատեան**, Քննական պատմութիւն Արշակ Երկրորդի եւ անոր Պապ որդւոյն, Երկերի ժողովածու, հ. երրորդ, հրատարակութեան պատրաստեց, խմբագրեց, վերջաբանը գրեց, ծանօթագրեց Արթուր

կությունն է սկզբնաղբյուրներում: Վաղես կայսրը, տեսնելով, որ պարսիկները ռազմակալել են ամբողջ Մեծ Հայքը և Բյուզանդիայի հետ առաջիկա գոտեմարտում կարող են հանդես գալ թելադրողի դիրքերից, փորձեց ուղղել իր նախորդի սխալը. նա հրամայում է օժանդակել Պապին, քանի որ Շապուհ Բ-ն իր գործողություններով ոտնձգություններ էր կատարում բյուզանդական իրավունքների նկատմամբ ամբողջ տարածաշրջանում: Նշենք, որ 369 թ. հայ Արշակունիների արքայատոհմի վերացումը կամ նոր արքայատոհմով նրա փոխարինումը, ինչին դեմ չէին թե՛ բյուզանդամետ, թե՛ պարսկամետ նախարարները և եկեղեցականների մեծ մասը, կայսրության արտաքին քաղաքականության օրակարգում չէր: Հաղթահարելով պարսիկների դիմադրությունը՝ հայ-բյուզանդական զորամիավորումները 369 թ. գարնանը մտան Արտաշատ, և Պապը հռչակվեց Մեծ Հայքի թագավոր[12]: Սա նշանակում էր Պարսկաստանի և պարսկամետ հայ ավագանու պարտություն: Շապուհ Բ-ն, պատճառաբանելով «Ամոթալի դաշինքը», 371 թ. գարնանը մեծ բանակով ներխուժում է Հայաստան: Պարսից արքայի դաշնակիցների թվում էր նաև աղվանից արքա Ուռնայրն իր զորաբանակով: Այդ մասին Փավստոս Բուզանդը նշում է. «Իսկ իբրև զօրահատոյցն առնէր Շապուհ Պարսից թագաւորն զզօրս իւր ի վերայ աշխարհին Հայոց և ի վերայ զօրացն Յունաց, Ուռնայր արքայ Աղուանից անդ էր առ թագաւորին Պարսից»[13]: Հայկական բանակը 371թ. գարնանը Ձիրավի դաշտում Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ[14] փառավոր հաղթանակ է տանում: Տեսնելով, որ մարտը չի ավարտվելու հօգուտ պարսիկների՝ աղվանից Ուռնայր արքան, որը ճակատամարտից առաջ Շապուհից խնդրում էր, որ մարտը վստահեն իրեն[15], փորձում է փախուստի դիմել: Սակայն ինչ-որ պահի աղվանից զորագնդերն ընկնում են շրջապատման մեջ, և Մուշեղ Մամիկոնյանը «հասանէր Ուռնայրի արքային Աղուանից ի փախստեանն, և նիզակաբնաւն ի կառափն մատուցեալ ծեծէր բազում, ասելով՝ թէ այդմ շնորհս կալ, զի այր թագաւոր ես և թագ ունիս, ես ոչ սպանից զայր թագաւոր, թէ կարի նեղ հասցէ ինձ: Եւ ութ

Անդրանիկեան, Եր., 2016, էջ 128- 129: Գերմանացի հայագետ Յ. Մարկվարտը կարծում է, որ Վաղես կայսեր հետ 369 թ. բանակցել է ոչ թե Մուշեղ Մամիկոնյանը, ինչպես թյուրիմացաբար նշում է Փավստոս Բուզանդը, այլ Գղակ և Արտավան նախարարները (տե՛ս **Markuart, J.**, Untersuchungen zur Geschichte von Eran II, Leipzig, 1905, էջ 213-214):

[12] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանի քաղաքական վիճակի ծանրացումը 363 թ. «Ամոթալի դաշնագրից» հետո և հայ ժողովրդի հերոսական պայքարը Սասանյան Իրանի զավթողական քաղաքականության դեմ, «Հայ ժողովրդի պատմություն», հ. II, Եր., 1984, էջ 101-102: Նաև՝ «Очерки истории Грузии», Тбилиси, 1988, էջ 54:

[13] **Փավստոս Բուզանդ**, էջ 294:

[14] Պատմահայրը հայոց բանակի սպարապետ է հիշատակում Սմբատ Բագրատունուն (տե՛ս **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի (այսուհետև՝ **Մովսես Խորենացի**), Եր., 1991, էջ 303):

[15] Տե՛ս **Փավստոս Բուզանդ,** էջ 294:

հեծելով թոյլ ետ նմա փախչել երթալ գնալ յաշխարհն Աղուանից»[16]: Թշնամի բանակի զորաթևի գերի ընկած հրամանատարներից մեկին կռվի դաշտից բաց թողնելը արտառոց դեպք էր ճակատամարտերի պատմության մեջ: Մուշեղ Մամիկոնյանը կարող էր եթե ոչ մահապատժի ենթարկել աղվանից արքային, այլ գոնե ձերբակալել նրան՝ հետագայում ինչ-ինչ հարցեր լուծելու ակնկալիքով կամ Մեծ Հայքի գավառները հետ ստանալու պայմանով: Սակայն հայոց սպարապետը զարմանալիորեն բաց թողեց Ուռնայրին, որը ոչ միայն, ինչպես վերը նշեցինք, ռազմակալել էր հայոց հյուսիսարևելյան մի շարք գավառներ, այլև հայ-պարսկական պատերազմում պարսիկների ամենաակտիվ դաշնակիցն էր և Ձիրավի ճակատամարտին մասնակցում էր հայոց պետականությունը կործանելու վճռականությամբ: Իմանալով կատարվածի մասին՝ թագավորի կողմնակիցները իրավացիորեն պախարակում են նրան. «Զի զքո թշնամիսն համակ արձակէ, զի զբազումս բազում անգամ ի բուռն արկեալ՝ սովոր է արձակել զթշնամիսն. զի Ուռնայր արքայ արձակեալ, թոյլ ետ ապրել, ի բուռն արկեալ զհակառակորդս քո»[17]: Փավստոս Բուզանդը հետին թվով փորձել է արդարացնել իր հերոսին. երբ թագավորը նրան հանդիմանել է, իբր թե սպարապետը պատասխանել է. «Եթէ զիմ զնգերսն զամենեսեան ես կոտորեցի. իսկ որ թագս ունէին՝ նոքա իմ ընգերք չէին, այլ քո. եկեսցես որպէս ես զիմսն սպանի, դու զքոյսն. այլ իմ յայր թագաւոր ոչ ձգեալ ձեռն երբէք որ թագ ունի, և ոչ ձգեմ, և մի այլ ձգել լիցի»[18]: Մամիկոնյանների շահերի անթաքույց պաշտպան Փավստոս Բուզանդի այս փաստարկը հորինվածք է: Հենց պատմիչի տեղեկություններից գիտենք, թե Մուշեղ Մամիկոնյանն ինչպես էր պատժում Հայաստանի ամբողջականության և պետականության նկատմամբ ոտնձգություն կատարողներին: Մասնավորապես. թագավորի հրամանով Մամիկոնյան սպարապետը վերագրավում է Մեծ Հայքի ծայրագավառները, որոնք անջատվել էին Արշակ Բ-ի կառավարման վերջին տարիներին[19]: Ամեն կերպ փորձելով արդարացնել Մուշեղ Մամիկոնյանի կասկածելի վարմունքը՝ Փավստոս Բուզանդը նշում է, որ Ձիրավի ճակատամարտից հետո իբր թե փոխվում է Ուռնայրի վերաբերմունքը Հայաստանի և հայերի նկատմամբ: Փորձելով ինչ-որ բանով վարձահատույց լինել Մուշեղին, նա բանագնացներ է ուղարկում Հայաստան, իբր թե «Շապուհ թագաւորն Պարսից ամենայն զօրօք իւրովք կազմի գալ անկանել յանպատրաստից եկն ի վերայ քո»[20]: Մամիկոնյաններին, մասնավորապես Մուշեղին գովերգող Փավստոս Բուզանդը Ուռնայրին բաց թողնելը փորձում է ներ-

[16] Նույն տեղում, էջ 304:
[17] Նույն տեղում:
[18] Նույն տեղում:
[19] Տե՛ս նույն տեղը, էջ 318, 320, 322, 324:
[20] Նույն տեղում, էջ 306:

կայացնել որպես դիվանագիտական քայլ՝ հօգուտ պետության: Մամիկոնյան սպարապետին ի՞նչը ստիպեց ազատ արձակել իր հակառակորդ աղվանից թագավորին: Մինչև Ձիրավի ճակատամարտը Մուշեղ Մամիկոնյանին թվում էր՝ եթե Պապը գահ է բարձրացել երիտասարդ տարիքում և գահակալել բյուզանդամետ խմբակցության աջակցությամբ, և այդ ուղղությունը Հայաստանում ղեկավարում էին կաթողիկոսը և Մամիկոնյանները, ապա պետք է ամեն ինչում հետևի վերջիններիս խորհուրդներին: Ինչպես պատկերավոր նշում է Հրանտ Արմենը, «Արքայական թագը Պապի գլխին պիտի մնար, մինչ իշխանությունը Մուշեղի ձեռքին»[21]: Սակայն Արշակ Բ-ի արժանավոր հետնորդն իր առաջին իսկ քայլերով ցույց տվեց, որ չի լինելու որևէ մեկի կամակատարը՝ լինի նա բյուզանդամետ, թե պարսկամետ խմբավորման պարագլուխ: Առաջ անցնելով նշենք, որ երիտասարդ թագավորի կողմից իրականացվող ներքին բարեփոխումները, այն է՝ պետության կառավարման գործում եկեղեցու իրավունքների սահմանափակումը, հոգևորականությանն աշխարհիկ գործերից դուրս մղելը հանգեցրին հունականության ազդեցության կտրուկ նվազման: Պետության մեջ երեքի՝ թագավորի, կաթողիկոսի և սպարապետի իշխանություն չէր կարող լինել: Իսկ նախորդ տասնամյակների փորձը ցույց էր տվել, որ վերջին երկուսը միշտ էլ միավորվում են թագավորական իշխանության դեմ: Հետագայում այդ հակասությունները հանգեցրին Պապ Արշակունու դեմ դավադրության[22]:

Նախքան Ձիրավի ճակատամարտը Պապի մեկուկես տարվա կառավարման շրջանը բյուզանդամետ խմբավորման համար բավական էր հասկանալու, որ նոր թագավորը չէր հանդուրժելու, որ նախկինի պես, ինչպես մեծ մասամբ եղել է քրիստոնեության ընդունումից ի վեր, Հայաստանը լինի հռոմեական կողմնորոշման ջատագով, այլ վարելու է իր երկրի շահերից բխող արտաքին քաղաքականություն: Եվ ինչպես Հ. Մանանդյանն է նշում, դա հարուցելու էր եկեղեցականների ու հռոմասեր խավի թշնամությունը[23]: Լինելով ռազմական և քաղաքական խելացի գործիչ՝ Մամիկոնյան սպարապետի համար արդեն պարզ էր, որ ինքը չի կարողանալու Հայաստանը կառավարել de facto, թեկուզ այդ ճանապարհին ունենար թե՛ եկեղեցու և թե՛ արդեն Հայաստանում գտնվող բյուզանդական բանակի աջակցությունը. քանի որ Պապի հետ էր կենտրոնական իշխանության ջատագով նախարարների մեծ մասը (Սյունիները, Բագրատունիները, Կամսարականները և ուրիշներ), և

---

[21] **Հրանդ Ք. Արմէն**, նշվ. աշխ. էջ 146:

[22] Տե՛ս **Լեո**, Հայոց պատմություն, Երկեր, հ. Ա, Եր., 1966, էջ 483, **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Բ, Եր., 1978, էջ 226-227, **Հ. Հարությունյան**, Հայաստանը Արշակունիների ժամանակ (1-429 թթ.), Եր., 1945, էջ 128-132, **Հրանդ Ք. Արմէն**, նշվ. աշխ., էջ 145-148, **Վ. Իսկանյան**, Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., Եր., 1991, էջ 50 և ուրիշներ:

[23] Տե՛ս **Հ. Մանանդյան**, նշվ. աշխ., էջ 217:

ինչո՞ւ չէ՝ թագավորը կարող էր հարաբերություններ հաստատել պարսիկների հետ, որի փորձը եղել էր նախկինում՝ Գղակի և Արտավանի սպանության ժամանակ[24]: Իսկ չափից առավել փառասեր սպարապետը ոչ մի կերպ չէր ցանկանում լինել երկրորդը: Ուստի Մուշեղը փորձում էր ապագայի համար դաշնակիցներ ձեռք բերել, քանզի հասկանում էր, որ ինքն ամեն ինչում և միշտ չէ, որ կարող է ապավինել բյուզանդացիների խոստումներին:

Իսկ առիթը շուտով եկավ: Դա Ձիրավի ճակատամարտն էր, որտեղ վճռվելու էին Արշակունյաց հարստության գոյության և նույնիսկ հայոց պետականության բախտը: Ինչպես գիտենք, Մուշեղ Մամիկոնյանը հաղթական ճակատամարտում ոչ միայն չգերեց և մահապատժի չենթարկեց հարևան երկրի թշնամի արքային[25], որը ռազմակալել էր Հայաստանի մի շարք գավառներ ու հասել երկրի կենտրոնական շրջանները, այլև նրան շուտափույթ բաց թողեց, որպեսզի նա չընկնի թագավորի ձեռքը: Եթե հավատալու լինենք Փավստոս Բուզանդին, մինչ Ուռնայրին ազատելը նման մեկ այլ դեպք էլ կատարվել էր Ատրպատականի ճակատամարտում, երբ Մուշեղ Մամիկոնյանը հաղթանակի է հասնում պարսիկների նկատմամբ: Պատմիչը գրում է. «Զի բազումս կոտորէին, և զբազումս յաւագանոյն Պարսից ձերբակալս առնէին, և առնուին զգանձս թագաւորին Պարսից յաւարի. և ըմբռնէին զտիկնանց տիկինն հանդերձ այլովիք կանամբքն»[26]: Այս հաղորդումը, կարծում ենք, չափազանցություն է, քանի որ իրենից բացի, ուրիշ այլ հեղինակներ, նույնիսկ Ամմիանոսը, չեն հիշատակում Շապուհի կանանոցը գերելու մասին: Փավստոս Բուզանդի մի շարք հաղորդումներ, որոնք հատկապես վերաբերում են Մամիկոնյանների գործունեությանը, չեն հաստատվում օտար աղբյուրներով[27]:

Հիշյալ վկայությունից մի փոքր անց Փավստոս Բուզանդն ավելացնում է. «Բայց զկանայսն Շապհոյ թագաւորին Պարսից ոչ ումեք ինչ թոյլ տայր Մուշեղ զօրավարն Հայոց անարգել ինչ զնոսա ումեք. այլ ժանաւարս տայր նոցա կազմել ամենեցուն, և հանեալ արձակէր զամենեսեան զհետ առն նոցա Շապհոյ արքայի»[28]: Պատերազմն ունի իր չգրված օրենքները, իսկ թե պատերազմական ժամանակներում ինչն է ստիպում հայոց սպարապետին նման «մարդասիրություն» դրսևորել, դժվար է կռահել: Չէ՞ որ դրանից մի փոքր առաջ, ըստ պատմիչի, Շա-

---

[24] Տե՛ս **Марцеллин**, XXVII, 12, 14:

[25] Նույն ճակատամարտում հայոց բանակի զորագլուխներից Սպանդարատ Կամսարականը գերում է Շապուհի մյուս դաշնակից՝ ղեկաց (լեզգիների) թագավոր Շերգիրին. «Եւ յարձակեալ Սպանդարատ, և հերձեալ զխումբն, որպէս զշանթահար յերկիր կործանէր զքաջն, և զխումբն պտուտեալ ի փախուստ դարձուցանէր» (**Մովսես Խորենացի**, էջ 304):

[26] **Փավստոս Բուզանդ**, էջ 290:

[27] Տե՛ս **Լ. Բաբայան**, Դրվագներ Հայաստանի վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (V-VIII դարեր), Եր., 1977, էջ 103:

[28] **Փավստոս Բուզանդ**, էջ 290:

պուհը հրապարակայնորեն անարգել էր Փառանձեմ թագուհուն[29] և հայ նախարարների կանանց: Եթե առաջին դեպքում Ուռնայրը թագակիր անձ էր, և Մուշեղը «չէր կարող սպանել» նրան, ապա Շապուհի կանանոցի դեպքում ո՛րն էր պատճառը[30]: Նա կարող էր որպես պատվավոր գերի պահել նրանց՝ մինչ կվճռվեր պատերազմի ելքը. գուցե դա զսպեր պարսից արքային, և Հայաստանն այդչափ ավերի ու թալանի չմատնվեր: Եթե Շապուհի կանանոցը գերելու դրվագը պատմիչի երևակայության արդյունք չէ, և Փավստոս Բուզանդը չի փորձում իր հերոսին տեղ ապահովել Ալեքսանդր Մակեդոնացու կողքին[31], ապա սպարապետի վարմունքը չենք կարող որակել այլ կերպ, քան պետական շահերի ոտնահարում, քանի որ պարսիկները քարուքանդ էին արել Մեծ Հայքի մեծագույն մասը, գերեվարել ու մահապատժի ենթարկել թագավորին, թագուհուն, մորթազերծ արել սպարապետին, ապա հենց պատմիչի վկայությամբ Զարեհավանում, հավաքելով հայ ավագանու կանանց, «Շապուհ արքայ հեծեալ ի ձի, շաւակի անցանէր առ կանանովն. և որ յակն գային. մի մի ի նոցանէ պղծեալ ի խառնակութիւն տանէր առ ինքն»[32]: Եթե հետևենք դեպքերի հերթականությանը, ապա Զիրավի ճակատամարտի նախօրյակին արդեն Պապը սպարապետին չի վստահում վարելու մարտը՝ ասելով. «Բարեկամ է Մուշեղն թագաւորին Պարսից Շապհոյ: Ո՛չ այդ այն Մուշեղն է, որ արձակեաց զկանայս թագաւորին Պարսից Շապհոյ հանդերձ ժանուարօք և վաշտկանօքն. և լուեալ ևս է իմ, թե ի պարսիկս խօսի. արդ մի՛ մտցէ դա ի ճակատ»[33]: Ինչպես տեսանք, հաջորդն արդեն Ուռնայրի դեպքն է: Եվ կամա թե ակամա արդեն պետք է լարվեին թագավորի և սպարապետի հարաբերությունները: Երբ հետագայում Վարազդատ արքան (374-378 թթ.) մահապատժի էր ենթարկում Մուշեղ Մամիկոնյանին, գլխավոր մեղադրանքներից մեկ էլ Շապուհի կանանոցի և աղվանից Ուռնայր արքայի ազատ արձակելն էր պատերազմական ժամանակներում[34]:

Գուցե գտնվեն ուսումնասիրողներ, որոնք կպնդեն, թե Մուշեղ Մամիկոնյանը փորձում էր իր այդ «մարդասիրական» քայլով կտրել Աղվանքը պարսկական կողմնորոշումից: Սակայն դա նույնպես հնա-

---

[29] Տե՛ս նույն տեղը, էջ 268: Ըստ Ամմիանոսի՝ Փառանձեմը տարվել է Պարսկաստան (տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրիստոմատիա», էջ 498):

[30] Հանդես գալով Հրանտ Արմենի աշխատության քննադատությամբ՝ Ռ. Մաթևոսյանը առանց հիմնավոր փաստարկների փորձում է արդարացնել Մուշեղ Մամիկոնյանի գործունեությունը (տե՛ս **Ռ. Մաթևոսյան**, Մուշեղ Մամիկոնյանը IV դարի հայ նշանավոր պետական գործիչ, «ՊԲՀ», 1990, № 3, էջ 86-91):

[31] Գավգամելայի՝ մ.թ.ա. 331 թ. ճակատամարտում Ալեքսանդր Մակեդոնացին գերեվարում է պարսից թագավորի կանանոցը (տե՛ս **Արիանոս**, Ալեքսանդրի արշավանքը, ռուսերենից թարգմանեցին Ա. Սարգսյանը, Ռ. Մավիսակալյանը, Եր., 1987, էջ 68-69):

[32] **Փավստոս Բուզանդ**, էջ 272:

[33] Նույն տեղում, էջ 296:

[34] Տե՛ս նույն տեղը, էջ 360:

բավոր չէր, քանի որ Աղվանքում պետականության ստեղծման պահից՝ մ. թ. ա. I դ. 80-ական թվականներից, այն միշտ էլ իր աշխարհագրական դիրքի շնորհիվ ունեցել է պարթևական և ապա պարսկական դիրքորոշում, և աղվանների համար պարզ էր, որ եթե իրենք արտաքին քաղաքականությունում չհետևեին պարսիկներին, ապա Մեծ Հայքի բազմաթիվ օրինակներով երկիրն ավերի ու ավարի կմատնվեր:

Անդրադառնալով այդ ժամանակ հայ-աղվանական հարաբերություններին՝ նշենք, որ Ձիրավից կարճ ժամանակ անց թագավորի հրամանով Մուշեղ Մամիկոնյանը ձեռնամուխ է լինում Արշակ Բ-ի գահակալության վերջին տարիներին Հայաստանից անջատված ծայրագավառների միավորմանը[35]: Հայկական զորաբանակը մտնում է Հայոց Արևելից կողմանց գավառները: «Առնէր պատերազմ ընդ երկիրն Աղուանից, հարկանէր զնոսա ի հարուածս անհնարինս: Եւ թափէր ի նոցանէ բազում գաւառս, զոր հատեալ էր նոցա ի նոցանէն. զՈւտի, զՇակաշէն և զձորն Գարդմանայ, զԿողթ և այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք: Եւ զԿուր գետ՝ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին. և ի գլխաւորացն բազումս սպանէին և զմնացորդսն ի հարկի կացուցանէին, և պանդանդս ի նոցանէ առնուին»[36], - հաղորդում է Փաստոս Բուզանդը: Թե աղվաններին որտեղ է հաղթել և ում է պատանդ վերցրել հայոց սպարապետը, պատմիչն այդ մասին լռում է: Աղվանից երկիր ասելով՝ Փավստոս Բուզանդը նկատի ունի Կուրի աջափնյա շրջանները, այն է՝ Հայոց Արևելից կողմերը, քանի որ վերը թվարկված գավառները գտնվում էին Ուտիքի կազմում, իսկ Կողթը՝ Արցախի[37]: Ուշադիր քննության ենթարկելու դեպքում կտեսնենք, որ արշավանքը սահմանափակվել է Կուրի աջափնյա շրջաններով, իսկ պատժվել են արքունի պաշտոնյաները, քանի որ Ուտիքի զգալի մասն Արշակունիների սեփական տիրույթներն էին[38], իսկ Արցախի տեղական իշխանությունը վերացվեց՝ հանձնվելով Սյունյաց նախարարական տանը[39], և Գահնա-

---

[35] Տե՛ս **Ա. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 63:

[36] **Փավստոս Բուզանդ**, էջ 320, 322:

[37] Տե՛ս «Աշխարհացոյց» Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց, Վենետիկ, 1881, էջ 33, **Ա. Յակոբեան**, Անանուն (Է. դար), Աշխարհացոյց. Գիտա-քննական բնագիրը, «Հանդէս Ամսօրեայ», 2013, թիվ 1-12, էջ 138-140: Բ. Հարությունյանը, քննության ենթարկելով Մեծ Հայքի հյուսիսարևելյան մարզերի վարչաքաղաքական վիճակը, գտնում է, որ Ուտի, Շակաշեն գավառները եղել են արքունական տիրույթներ, միայն Գարդմանաձորն է եղել իշխանական կալվածք (տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թվականներին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1976, թիվ 2, էջ 80-81):

[38] Տե՛ս «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, էջ 21, **Մովսես Խորենացի**, էջ 169:

[39] Հարցի մանրամասն քննությունը (տե՛ս **Բ. Հարությունյան**, Հայոց Արևելից կողմերի վարչական բաժանումը, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան (Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր), Եր., 2007, էջ 35 և կից քարտեզը:

մակում այն արդեն հանդես է գալիս որպես «Սիւնեաց երկրորդն»[40]: Մուշեղ Մամիկոնյանը ոչ թե նոր տարածքներ էր նվաճում աղվաններից, ինչպես ընդունված է ուսումնասիրողների շրջանում, այլ վերագրավում էր հայկական գավառները՝ միացնելով Հայաստանին: Իսկ աղվանները Կուրի աջափնյակը իրենց կայազորներից ազատել էին արդեն Ձիրավի ճակատամարտից անմիջապես հետո: Եթե Ուռնայրը տեղեկացնում էր Մուշեղին պարսիկների հնարավոր հարձակման մասին, ապա ավելորդ էր զորամիավորումները պահել հայկական գավառներում, քանի որ հայկական բանակը վաղ թե ուշ վերագրավելու էր այդ շրջանները:

Սակայն վերադառնանք թագավորի և սպարապետի հարաբերություններին, որոնք գնալով ավելի էին լարվում: Իսկ բյուզանդամետ խմբավորման և եկեղեցականների թշնամությունը հանդեպ թագավորն այնքան էր խորացել, որ նրանք հասցրել էին կայսեր արքունիքում վատաբանել արքային՝ նրան վերագրելով եղած ու չեղած բազմաթիվ մեղքեր: Տեղյա՞կ էր արդյոք Մուշեղ Մամիկոնյանը կայսերն ուղարկված այդ բազմաթիվ զեկույցներից, այսօր չենք կարող միանշանակ պատասխանել սկզբնաղբյուրներում ուղղակի տեղեկություններ չլինելու պատճառով: Սակայն պարզ է, որ այդ ամենը կատարվել է Մուշեղի լուռ համաձայնությամբ, գուցե անմիջական ղեկավարությամբ[41]: Պապ Արշակունին, որ կայսեր հրավերով ժամանել էր Կիլիկիայի Տարսոն քաղաքը՝ իբր թե խորհրդակցության, կարողացավ դուրս պրծնել բյուզանդացիների լարած թակարդից և վերադառնալ հայրենիք[42]: Այս դեպքից հետո Պապի համար պարզ էր, որ բյուզանդամետ թևը պետք է տեղյակ լիներ, թե իրեն ինչ էր սպասվում Տարսոնում, և նրանք էին գուցե խորհուրդ տվել թագավորին մեկնել կայսեր մոտ: Արշակունյաց գահակալի համար հասկանալի էր արդեն, որ հռոմեական քաղաքական կողմնորոշումը նույնքան անբարենպաստ ու վտանգավոր է Հայաստանի համար, որքան Մերուժան Արծրունու 368-371 թթ. գլխավորած պարսկական կողմնորոշումը[43]: Եթե Արծրունյաց իշխանը գործում էր բացահայտ՝ Արշակունյաց արքայատոհմը փոխարինելու և պարսից գերակայությամբ կառավարելու նպատակով, ապա հունական խմբավորումը նույնն էր անում, բայց առանց բացահայտ առճակատման և ապավինելով ժամանակին և դավադրություններին: Պապի համար ընկալելի էր, որ բյուզանդացիները, հայոց երկրում ունենալով նման եռանդուն համախոհներ, կփորձեն ավարտին հասցնել այն դավադրութ-

[40] Տե՛ս **Адонц Н.**, նշվ. աշխ., էջ 263: **Ա. Յակոբեան**, «Գահանմակ ազատաց եւ տանուտէրանց հայոց» եւ «Ջաւրանամակ», էջ 534:

[41] Լեոն նշում է, որ Մուշեղը նույնիսկ դարձավ դավադիրների գործակալը (տե՛ս **Լեո**, նշվ. աշխ., էջ 483):

[42] Տե՛ս **Марцеллин**, XXX, 1, 3-17:

[43] Տե՛ս **Լ. Բաբայան**, Քաղաքական կողմնորոշման արտացոլումը V-VII դարերի հայ պատմագրության մեջ, «ՊԲՀ», 1983, № 1, էջ 92:

յունը, ինչը չկարողացան իրագործել Տարսոնում: Եվ թագավորը կամա թե ակամա պետք է դաշնակիցներ գտներ՝ ի հակակշիռ նենգ բյուզանդացիների և նրանց օգտին կուրորեն գործող հայ դավադիրների: Փավստոս Բուզանդը գրում է. «Եւ շրջեաց զմիտս իւր թագաւորն Պապ և խոտորեաց զսիրտ իւր ի թագաւորէն Յունաց և կամեցաւ խառնել զսէր իւր և առնել միաբանութիւն ընդ թագաւորին Պարսից: Եւ սկսաւ թիկունս իւր առնել զարքայն Պարսից, և արձակել անդրէն հրեշտակս յաղագս միաբանութեան»[44]: Սակայն թագավորը չկարողացավ հասնել իր նպատակին, քանի որ դավադիրները գործում էին շատ արագ և նպատակասլաց: Դրան նպաստեց նաև այն, որ Հայաստանում էր գտնվում Ձիրավի ճակատամարտից հետո այստեղ տեղակայված բյուզանդական զորաբանակը: Չխորանալով Պապի սպանության մանրամասների մեջ[45], քանի որ դրան մասնագիտական գրականության մեջ բազմիցս անդրադարձ է եղել, նշենք միայն, որ Ամմիանոսը, նկարագրելով թագավորի եղերական մահը, փաստում է, որ դրա կազմակերպման գործում դեր են ունեցել նաև տեղի բնակիչներից մի քանիսը[46]: Հասկանալի է, որ հռոմեացի պատմիչը նկատի ունի ոչ թե ինչ-որ աննշան մարդկանց, այլ ազնվականության բարձր դասի ներկայացուցիչների, որոնք կշիռ ունեին պետության կառավարման գործում և կարող էին ազդել դեպքերի զարգացման վրա: Նախ նշենք, որ Պապի կառավարման վերջին շրջանում՝ հատկապես Տարսոն մեկնելուց և վերադառնալուց հետո, Մուշեղ Մամիկոնյանն այլևս ակտիվ գործունեություն չի ծավալում: Վերջինս թագավորի հետ չէր թե՛ Տարսոնում, թե՛ նրա սպանության ժամանակ: Հատկապես Տարսոնում, որտեղ պետք է կայանային Հայոց թագավորի և կայսեր բանակցությունները, սպարապետի բացակայությունը տարօրինակ է, քանի որ վերջինս՝ որպես հունական կողմնորոշման ղեկավար և Ներսես կաթողիկոսի մահից հետո պետության մեջ երկրորդ անձ, պետք է ներկա գտնվեր: Մամիկոնյան սպարապետը ներկա չէր նաև թագավորի պատվին Տրայանոսի կազմակերպած ճաշկերույթին[47]: Եվ իրավացի է Հ. Մանանդյանը, երբ քննելով վերը նշված դեպքերը՝ գրում է. «Մուշեղ Մամիկոնյանը և մեծամեծ հայ իշխանները, որոնք լքել էին և չէին պաշտպանել Պապ թագավորին, այլևս չէին կարող հաստատուն նեցուկ համարվել Արշակունյաց թագավորության»[48]:

---

[44] **Փավստոս Բուզանդ**, էջ 352:

[45] Տե՛ս **Марцеллин**, XXX, 1, 22. **Փավստոս Բուզանդ**, էջ 352, 354, 356, **Մովսես Խորենացի**, էջ 306-307:

[46] Տե՛ս **Марцеллин**, XXX, 1, 3:

[47] Պապին ուղեկցում էր հայոց արևելյան բանակի հրամանատար Գնել Անձևացին (տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 307):

[48] **Հ. Մանանդյան**, նշվ. աշխ., էջ 227: Մամիկոնյանների և հատկապես Մուշեղ Մամիկոնյանի գործողությանը անդրադարձած Հ. Դավթյանը նշում է, որ այդ ժամա-

Սպարապետի վարմունքը տարօրինակ է նաև թագավորի սպանությունից հետո: Բյուզանդական ինչ-որ հետին պաշտոնյաների ձեռքով հայոց հողում սպանվել էր Հայոց թագավորը, իսկ հայ ռազմական վերնախավը գոնե չփորձեց պատժել հույն պաշտոնյաներին: Մեծ Հայքն այդ ժամանակ բավականին հզոր տերություն էր, և զինուժի թիվն առնվազն 90 հազար էր: Թվում է, թե բոլորն էլ բավարարված էին, և կենտրոնամետ պետության ձգտող թագավորի մահը լայն ասպարեզ էր բացում ազդեցիկ զինվորականության համար: Պապի սպանությունից անմիջապես հետո նորից տիրապետող դարձավ հունական խմբակցությունը, և նրանց ջանքերով էլ հրավիրվում է իշխանաժողով. «Զինչ արասցուք կամ զի՞նչ գործեսցուք, խնդրեսցուք զվրէժ թագաւորին մերոյ, թէ ոչ: Ոչ կարեմք հեթանոսաց ի պարսկաց ի ծառայութիւն մտանել, և թշնամի առնել զթագաւորն Յունաց. և ոչ զերկոսեան թշնամի առնել, և ոչ առանց միոյ թիկանց կարեմք կեալ: … թէ զինչ եղն՝ ահա եղև, թող ծառայեսցուք թագաւորին Յունաց. կացցուք ի հնազանդութեան իշխանութեան թագաւորութեանն Յունաց. զիարդ և կամք իցեն թագաւորութեան Յունաց, արասցեն մեզ: Եւ ոչ ինչ արկին ի միտ, կամ վրէժ խնդրել, կամ այլազգ ինչ իրս առնել. այլ անցին կացին լուռ»[49]:

Պատմիչի հաղորդումը ևս մեկ անգամ հաստատում է այն իրողությունը, որ մոլեռանդորեն Բյուզանդիային նվիրված հայ իշխանական դասը պատրաստ էր ամեն ինչ զոհել, միայն թե պահպանի կայսրության հետ սին բարեկամությունը: Հունական խմբավորումը, ի դեմս սպարապետի, ոչինչ չձեռնարկելով, մեկ այլ խնդիր էլ էր լուծում: Դեռևս չիմանալով, որ Կ. Պոլսում Մեծ Հայքի համար նոր գահակալ են նախապատրաստում, փորձում էր ամբողջ երկրում փաստական իշխանությունը անաղմուկ վերցնել իր ձեռքը: Անվանապես կկառավարեին Պապի մանկահասակ որդիները, սակայն իշխանությունը կպատկաներ Մուշեղին, և դա էլ կլիներ իր ծառայությունների վարձը: Սակայն կայսերական արքունիքում բարձր եկեղեցական դասի որոշ ներկայացուցիչների և բյուզանդամետ իշխանների ծառայությունները բավարար չգնահատվեցին, և հայոց գահ բարձրացավ Վարազդատ Արշակունին[50]:

Նրա և սպարապետի հարաբերությունները հենց սկզբից էլ լարված բնույթ ընդունեցին: Թագավորը, որը փորձում էր փոքրիշատե

նակ հայոց զորքը թագավորի հետ չէր, այսինքն՝ Մուշեղը Պապին դավադրորեն մենակ էր թողել, և հույն զինվորականներին մնում էր պարզապես օգտվել պատեհ առիթից ու սպանել Պապին (տե՛ս **Հ. Դավթյան**, Մամիկոնյաններ. Առասպել և իրականություն, Եր., 2015, էջ 155):

[49] **Փավստոս Բուզանդ**, էջ 356:

[50] Տե՛ս նույն տեղը, նաև՝ **Մովսես Խորենացի**, էջ 356:

ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարել, չէր կարող ընդունել Մուշեղ Մամիկոնյանի՝ Հայաստանի անկախության համար կործանարար ծրագիրը:

Փավստոս Բուզանդի նկարագրությամբ՝ ծրագրի իմաստը հետևյալն էր. «Խորհէր ևս ընդ իշխանսն Յունաց, և նոքօք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա քաղաք մի շինել յերկիրն Հայոց. ի մի մի գաւառսն, որ մին մի քաղաքս, որ երկուս երկուս ամուր պարսպաւորս զօրանիստս հաստատել ընդ ամենայն երկիրն Հայոց. մինչև ի Գանձակ սահման երկիրն, որ Պարսից կուսէ էր, Հայոց սահման էր. և զամենայն ազատսն Հայոց կայսերական թօշակօքն զինուորել. սոյնպէս և զօրաց երկրին Հայոց, զի այսպէս ամեայն զգուշութիւն լիցի առ ի թշնամեաց իւրեանց ի զօրացն Պարսից»[51]: Եթե այս ծրագիրն իրագործվեր, ինչպես նկատում է Հ. Մանանդյանը, ավելի քան հավանական է, որ Մեծ Հայաստանը ևս միացվեր կայսրությանը գրեթե նույն պայմաններով, ինչպես Անդրտիգրիսյան նախարարական երկրները[52]:

Դրանով ամբողջ Մեծ Հայքը հայ իշխող վերնախավի թեթև ձեռքով առանց պայքարի նվիրվում էր կայսրությանը: Մուշեղ Մամիկոնյանի այդ ծրագրով Հայաստանը ապագայում կդառնար բանակաթեմ, ինչին բյուզանդացիները հասան մի քանի հարյուրամյակ անց, երբ կործանեցին Բագրատունյաց թագավորությունը, և հայկական նվաճված շրջաններում կայսրությունը կազմակերպեց կատեպանություններ[53]:

Այս քաղաքականությունը ոչնչով չէր տարբերվում Մերուժան Արծրունու կողմից մի քանի տարի առաջ իրականացվող ծրագրից, քանզի երկուսն էլ, զոհաբերելով Հայաստանի պետական շահը, տրամադիր են եղել հանձնելու երկիրը հարևան հզոր պետություններին[54], վերացնելու հայոց թագավորի իշխանությունը, նրան դարձնելու կայսրի ձեռքին խաղալիք[55], ինչպես հետագայում պատահեց Արշակ Գ-ի հետ:

Բնական է, որ Հայոց թագավորը և կենտրոնական իշխանության ուժեղացմանը ձգտող նախարարները և ինչո՞ւ չէ՝ պարսկամետ ուժերը չէին կարող հանդուրժել նման վիճակը: Ինչքան էլ Փավստոս Բուզանդը Վարազդատին ներկայացնի որպես պետության կառավարման գործում անընդունակ և մանուկ[56], այնուամենայնիվ վերջինս ավելի զգուշավոր էր Մուշեղի և նրա կողմնակիցների նկատմամբ, քան իր նախորդը: Դրա պատճառը հավանաբար այն էր, որ թագավորի կողմնակիցները՝ Բատ Սահառունին և մյուսները, Վարազդատին հասկաց-

---

[51] **Փավստոս Բուզանդ**, էջ 358:

[52] Տե՛ս **Հ. Մանանդյան**, նշվ. աշխ., էջ 230:

[53] Տե՛ս **Հ. Բարթիկյան**, Հայաստանի նվաճումը Բյուզանդական կայսրության կողմից, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա, Եր., 2002, էջ 238:

[54] **Հ. Մանանդյան**, նշվ. աշխ., էջ 232-233, տե՛ս նաև **Լ. Բաբայան**, Քաղաքական կողմնորոշման արտացոլումը V-VII դարերի հայ պատմագրության մեջ, էջ 92:

[55] Տե՛ս **Լեո**, նշվ. աշխ., էջ 489:

[56] Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 358:

րել էին, որ Պապ թագավորի սպանության կազմակերպման մեջ գործուն դեր են ունեցել բյուզանդամետ հայ նախարարները: Խրատված իր նախորդի փորձից՝ թագավորը որոշում է ասպարեզից հեռացնել Մուշեղ Մամիկոնյանին: Ինչպես հաղորդում է Փավստոս Բուզանդը, Բատ Սահառունին Մամիկոնյան սպարապետին ներկայացնում է բազմաթիվ մեղադրանքներ. «Այն Մուշեղ է, որ ի թագաւորութեան ժամանակ Պապայ ի պատերազմունսն Պարսից քանիցս անգամ ձեռնահաս եղև սպանանել զՇապուհ արքայն Պարսից, և ոչ եսպան, այլ արձակեաց զթշնամին. և երբեմն զկանայս Շապհոյ թագաւորին ի բուռն էարկ, և խնամոտ գթով ժանուարօք արձակեաց զնոսա զհետ Շապհոյ: Ո՞չ այդ այն Մուշեղն է, որ զՈւռնայր արքայ Աղուանից ի բուռն էարկ, և սպանանել ոչ կամեցաւ, այլ արձակեաց զթշնամին: Ո՞չ այդ այն Մուշեղն է, զի զարքայն Պապ հրամանաւ դորա և դորին խորհրդովդ զօրավարքն Յունաց սպանին. զի դա ոխացոյց և գրգռեաց զարքայն Յունաց ի վերայ թագաւորին Պապայ, մինչև ետ սպանանել»[57]: Սպարապետը սպանվում է խնջույքի ժամանակ, նմանատիպ հանգամանքներում՝ ինչպես Պապ Արշակունին[58]:

Այսպիսով՝ Մուշեղ Մամիկոնյանը, կատարելով իր պարտականությունները սպարապետության պաշտոնում և օգտվելով իր ձեռքի տակ եղած հսկայական զինուժից ու բյուզանդամետ խմբավորման լայն աջակցությունից, փորձում էր իր կամքը պարտադրել երիտասարդ թագավորին: Սակայն տեսնելով, որ Պապ Արշակունին չի դառնալու որևէ մեկի կամակատարը, Մամիկոնյան սպարապետը կարճ ժամանակ անց հեռացավ նրանից՝ փորձելով ապագայի համար հնարավոր դաշնակիցներ ձեռք բերել: Վերջիվերջո, թագավորի և սպարապետի միջև ոչ բոլորի համար տեսանելի հակամարտությունը ողբեգական վախճան ունեցավ երկուսի համար էլ: Նախ Մեծ Հայքը կորցրեց իր նշանավոր թագավորին, ապա, հաջորդ գահակալի կողմից մի շարք մեղադրանքների արժանանալով, մահապատժի ենթարկվեց Մուշեղ Մամիկոնյանը:

Բանալի բառեր - *Մուշեղ Մամիկոնյան, Պապ թագավոր, Զիրավի ճակատամարտ, Արշակունյաց հարստություն, Ուռնայր, բյուզանդամետ խմբավորում, Շապուհ Բ, Փավստոս Բուզանդ*

АРГИШТИ ВАРДАНЯН – ***Об оценке деятельности Мушега Мамиконяна.*** – В 371 г. благодаря битве при Дзираве усилилась власть царя Папа Аршакуни, взошедшего на трон двумя годами ранее. Напротив, осложнились его отношения со спарапетом Мушегом Мамиконяном, который, прежде возвратив персидскому царю Шапуру его гарем, на сей раз отпустил пленённого албанского царя

[57] Նույն տեղում, էջ 360:
[58] Տե՛ս նույն տեղը, 360, 362:

Урнайра. Спарапет Мушег возглавлял провизантийскую группировку при дворе и вместе с духовенством пытался подчинить своей воле молодого царя, проводившего самостоятельную политику. Противостояние привело к убийству Папа, в котором его преемник обвинил Мушега; спарапет был казнён.

Ключевые слова: *битва при Дзираве, богатство дома Аршакуни, византийская группировка, Шапур II, Фавстос Бузанд*

ARGISHTI VARDANYAN – *On the Issue of the Appraisement of the Activity of Mushegh Mamikonyan*. – The power of Pap Arshakuni (the latter was crowned in 369) was strengthened in 371 in the battle of Dzirav. However, the military leader (sparapet) Mushegh Mamikonyan from the battlefield released captured King Urnajr of Aghvan, and before that he had also returned the captured harem of Shapuh. These disagreements became an occasion for strained relations between the king and the commander because the commander also leading the group, which had Byzantine orientation together with the clergy tried to impose their will on the king. But King Pap Arshakuni was conducting such a policy, which originated from the interests of his country. Eventually, the contradictions deepened so much, that a conspiracy was organized against the king, and Mushegh Mamikonyan was executed by the next king on charges of killing of the king.

Key words: *Mushegh Mamikonyan, King Pap, Battle of Dzirav, riches of Arshakunis Urnajr, Byzantine group, Shapuh B, Pavstos Buzand, pro-Byzantine grouping*